ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ 2015Թ. ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	Աշխատանքի ուղղությունը	Միջոցառման անվանումը		Աշխատանքի կատարման ժամկետները		Աշխատանքի կատարման արդյունքները
		Նախատեսված	Չնախատեսված, սակայն փաստացի իրականացված	Նախատեսված	Փաստացի	
	1	2ա	2բ	3ա	3բ	4
1.	Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող ծրագրերով՝ մարզպետարանի իրավասության ոլորտներին վերաբերվող դրույթների և/կամ այլ փաստաթղթերի կատարում	2014 թվականի դեկտեմբերի 16-ին Թեհրանում կայացած հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի 12-րդ նիստի Փոխըմբռնման հուշագրի 6.2 և 6.4 կետերի պահանջի կատարում (ՀՀ Սյունիքի մարզպետարանի և ԻԻՀ Արևելյան Ատրպատականի նահանգի միջև միջմարզային համագործակցության ակտիվացում և զարգացում)		2015թ. տարվա ընթացքում	2015թ. տարվա ընթացքում	-ՀՀ Սյունիք մարզպետի 09.02.2015թ. թիվ 01/562-15 գրությամբ ներկայացվել է տեղեկատվություն հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի 11-րդ նիստի հուշագրով ամրագրված՝ ՀՀ Սյունիքի մարզին առնչվող պայմանավորվածությունների կատարման ընթացքի վերաբերյալ սահմանված ձևին համապատասխան: - ՀՀ Սյունիք մարզպետի գրություններով /18.03.2015թ. թիվ 01/1489-15, 22.09.2015թ. թիվ01/4774-15 և 16.12.2015թ. թիվ 01/6246-15/ ներկայացվել է տեղեկատվություն հայ-իրանական միջկառավարական համատեղ հանձնաժողովի 12-րդ նիստի հուշագրով ամրագրված՝ ՀՀ Սյունիքի մարզին առնչվող պայմանավորվածությունների կատարման ընթացքի վերաբերյալ - ՀՀ Սյունիքի մարզի և ԻԻՀ

						Արևելյան Ատրպատականի նահանգի միջև համատեղ մշակութային միջոցառումների իրականացում ՀՀ Սյունիքի մարզում և ԻԻՀ Արևելյան Ատրպատականի նահանգում. /Մշակութային համատեղ ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ Սյունիքի մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում շահագրգիռ կողմերի հետ մշակութային համատեղ ծրագրերի մշակման աշխատանքների իրականացում/ - Սյունիքի մարզպետարանը գյուղատնտեսության, անասնապահության, զբոսաշրջության և մշակույթի ոլորտներում փոխշահավետ ծրագրերի իրականացման նպատակով աշխատանքներ է կատարել հեռանկարային և գրավիչ ուղղություններով երկարաժամկետ համագործակցություն իրականացնելու համար, այդ թվում՝ Սյունիքի մարզում գործող զբոսաշրջային ընկերությունների հետ համատեղ իրանցի զբոսաշրջիկների համար հետաքրքրություն ներկայացնող երթուղիներով և ծրագրով զբոսաշրջային փաթեթների նախապատրաստման և իրանական կողմին ներկայացման ուղղությամբ
2.	Օտարերկրյա պետությունների տարածքային միավորների հետ համաձայնագրերի	Օտարերկրյա պետությունների տարածքային միավորների հետ նոր		2015թ. տարվա ընթացքում	2015թ. տարվա ընթացքում	

	կամ այլ փաստաթղթերի /ծրագրերի/ կնքում և կատարում	փաստաթղթերի կնքում և նախկինում կնքված փաստաթղթերով նախատեսված կետերի կատարում 1. Ռուսաստանի Դաշնության Վոլգոգրադի նահանգի և ՀՀ Սյունիքի մարզի միջև առևտրա-տնտեսական, գիտատեխնիկական և մշակութային բնագավառներում համագործակցություն	1. Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասի հետ հարաբերությունների հաստատում 2.Հայաստանի հետ Գերմանական Ֆինանսական Համագործակցության շրջանակներում ՀՀ բնապահպանության			1. ՀՀ Սյունիք մարզպետի 11.12.2014թ. թիվ 01/6953-14 գրությամբ՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով, ուղարկվել է Ռուսաստանի Դաշնության Վոլգոգրադի նահանգապետ Ա. Ի. Բոչարովին ուղղված Սյունիքի մարզպետի գրությունը և ՌԴ Վոլգոգրադի մարզի և ՀՀ Սյունիքի մարզի միջև առևտրա-տնտեսական, գիտատեխնիկական և մշակութային բնագավառներում համագործակցության վերաբերյալ համաձայնագրի լրամշակված տարբերակը: 1.ՀՀ Սյունիք մարզպետի 29.09.2015թ. թիվ 01/16/4911-15 գրությամբ ՌԴ Կրասնոդարի երկրամասի նահանգապետ Ի. Վ. Կոնդրատևը հրավիրվել է ՀՀ Սյունիքի մարզ, քննարկելու տնտեսության բնագավում երկկողմ և փոխշահավետ համագործակցության հարցեր 2. ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ Սյունիքի մարզպետարանի և գերմանական զարգացման բանկի միջև կնքված համաձայնագրի շրջանակներում 2012թ. սկսվել են <<Շիկահողի կենսոլորտային

			նախարարության, ՀՀ Սյունիքի մարզպետարանի և Գերմանական KFW բանկի, հետ կնքված համաձայնագրի կատարում 3.Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության /ՇԶՀԳ/ հետ հաստատված համագործակցության համաձայնագրի կատարում, 4.ՇԶՀԳ–ի միջոցով Գորիսի և Սիսիանի տարածաշրջանների 40 համայնքներում անասնապահության զարգացման ծրագրի իրականացում 4. <<Վորլդ վիժն>> ՄԲԿ-ի միջոցով մարզի Կապանի,			արգելոցի հիմնադրման և շրջակա համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի>> պիլոտային փուլը: Ծրագրի ընդհանուր ներդրման չափը կկազմի 8.25 մլն եվրո: 2013թ. ընթացքում ծրագրի կողմից մարզում ներդրումները կազմել են 54.0 մլն դրամ: Ծրագիրը կվերսկսի իրականացվել 2016թ.-ին: 3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի ՇԶՀԳ-ի հետ հաստատվել և <<ՔԱՐԴ>> հիմնադրամի միջոցով 2015թ. շարունակվել է Մեղրիի տարածաշրջանի գյուղական զարգացման ծրագիրը շուրջ 100.0 մլն դրամ ընդհանուր գումարով: 4. ՀՀ Սյունիքի մարզպետարանի և ՇԶՀԳ-ի հետ հաստատվել և <<Ռազմավարական զարգացման գործակալության>> միջոցով 2014թ. շարունակվել է Գորիսի և Սիսիանի տարածաշրջանների համայնքներում անասնապահության զարգացման ծրագիրը: Ներդրումների չափը 2015թ. կազմել է 230.0 մլն դրամ: 4. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աջակցությամբ և <<Վորլդ վիժն>> ՄԲԿ-ի միջոցով մարզի Կապանի, Սիսիանի և

			Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններում առողջապահական, կրթական և գյուղատնտեսական մի շարք ծրագրերի իրականացում 5.<<Իստեյտ մենեջմենթ ենդ ադմինիսթրեյշն քամփնի>> ՓԲԸ-ի միջոցով մարզում իրականացված ծրագրեր 6.ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ մարզում իրականացված ծրագրեր			Գորիսի տարածաշրջաններում 2015թ. իրականացվել են 112.8 մլն դրամի առողջապահական, կրթական, մշակութային մի շարք ծրագրեր: 5.<<Իստեյտ մենեջմենթ ենդ ադմինիսթրեյշն քամփնի>> ՓԲԸ-ի միջոցով մարզում իրականացվել է ավելի քան 263.5 մլն դրամի ներդրումներ: 6. ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ 2015թ. իրականացվել է 34.4 մլն. դրամի ծրագրեր: Սկսել է մշակել ծրագիր Սյունիքի մարզի էկոնոմետրիկ մոդելի կառուցման նպատակով: Մոդելը հնարավորություն կտա վեր հանել Սյունիքի մարզում տնտեսության առանձին ոլորտների միջև եղած փոխահարաբերությունները՝ ըստ մարզի տարածաշրջանների:

3	Աշխատանքային, ուսուցողական, ճանաչողական այցեր օտարերկրյա պետությունների տարածքային միավորներ և միջազգային կազմակերպություններ, մարզ այցելող օտարերկրյա պետությունների տարծքային միավորների, միջազգային կազմակերպությունների պաշտոնատար անձանց ընդունում և ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացում	Օտարերկրյա պետությունների տարածքային միավորների հետ փոխադարձ այցելությունների կազմակերպում		2015թ. տարվա ընթացքում	2015թ. տարվա ընթացքում	-2015թ. հոկտեմբերի 10-ին Գորիսում կազմակերպվեց ամենամյա <<Գորիսյան օրեր>> տոնակատարությունը, որին ներկա էին Գորիսի քույր քաղաք՝ Բելոռուսիայի Նեսվիժ քաղաքը ներկայացնող պատվիրակությունները:
4.	Բազմակողմ և այլ միջոցառումներ	Միջազգային կազմակերպությունների, դեսպանությունների ներկայացուցչությունների այցելությունների կազմակերպում		2014թ. տարվա ընթացքում	2014թ. տարվա ընթացքում	- 2015թ. ապրիլի 6-ին Սյունիքի մարզ աշխատանքային այցով ժամանել էր Բելոռուսի Հանրապետության դեսպան Ս. Սուխորենկոն: Դեսպանի այցի նպատակն էր <<70-лет освобождения Республики Беларусь от немецко-фашистких захватчиков>> հոբելյանական մեդալներով պարգևատրել Սյունիքի մարզի Հայրենական մեծ պատերազմի այն մասնակիցներին, ովքեր մասնակցել են Բելոռուսի ազատագրման մարտերին: -2015թ. մայիսի 20-ին Սյունիքի մարզետը ընդունել է CARD հիմնադրամի պատասխանատուներին: Քննարկվեցին հիմնադրամի կողմից իրականացվող <<Շուկաներ Մեղրիի համար>> ծրագրի

						շրջանակներում Մեղրիի տարածաշրջանի շրջանավարտների համար ագրո-էկոնոմիկայի համալսարանում նպատակային տեղեր ապահովելու, ագրոէկոնոմիկական խորհրդատվական ծառայություն ստեղծելու, մարտ ամսին բերքատվություն ապահովող նոր տեսակների բուսաբուծության, Մեղրին էտալոնային գյուղատնտեսական տարածաշրջան դարձնելու անհրաժեշտ պայմաններն ու հնարավորությունները: - 2015թ. հունիսի 18-ին ճանաչողական այցով Սյունիքի մարզ են այցելել ՀՀ–ում Արգենտինայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Գոնզալո Ուրրիոլաբեիտիան: Քննարկվել են մարզի տարբեր բնագավառներում փոխգործակցության ներուժի բացահայտման և լիարժեք օգտագործմանն առնչվող հարցեր - 2015թ. հուլիսի 16-ին Սյունիքի մարզ էր այցելել Գերմանիայի ֆինանսական համագործակցության շրջանակներում գործող <<Պահպանվող տարածքների աջակցություն>> ծրագրի /GITEC/ ղեկավար Գեվին Բելլը: Անցկացվեց աշխատանքային քննարկում՝ պահպանվող տարածքների կառավարման արդյունավետության բարձրացման, դրանց մոտ գտնվող գյուղական համայնքների բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի

						բարելավման հարցերի շուրջ: -2015թ. օգոստոսի 18-ին տեղի ունեցավ հանդիպում-քննարկում՝ Սյունիքի մարզի գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կրթական հաստատությունների, քաղաքացիական հասարակության կառույցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: -2015թ. սեպտեմբերի 19-ին ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանը մասնակցել է Երևանում կազմակերպված <<Շուկաներ Մեղրիի համար>> ծրագրի երկրորդ փուլի մեկնարկի առթիվ կազմակերպված միջոցառմանը:<<CARD>> հիմնադրամի և շվեցարական <<HELVETAS Swiss Intercooperation>> -ի համատեղ ջանքերով իրականացվող ծրագիրը ֆինանսավորվում է Շվեցարիայի միջազգային զարգացման գործակալության կողմից և նպատակն է՝ աջակցել Մեղրիի տարածաշրջանի պտղաբույծների, վերամշակողների և առևտրային կազմակերպությունների արտադրողականության ու եկամտաբերության բարձրացմանը: -2015թ. սեպտեմբերի 30-ին եռօրյա աշխատանքային այցով Սյունիքի մարզում

						էր ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ղեկավար դեսպան Անդրեյ Սորոկինը: Նա այցելեց Կապանի տարածաշրջանի Սյունիք համայնք, որտեղ ԵԱՀԿ-ի <<Սյունիքի մարզում ԵԱՀԿ ծրագրերի գրասենյակի>> և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի <<Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի փոքր դրամաշնորհներ>> ծրագրի ֆինանսական և տեխնիկական, մարզպետարանի գործուն աջակցությամբ, ինչպես նաև համայնքային կառույցների մասնակցությամբ վերականգնվել է Սյունիք համայնքի ջրանցքը: Այցը նշանավորվեց Սյունիք և Աճանան համայնքները սպասարկող 4 կիլոմետանոց ջրանցքի բացումով: Մարզում ԵԱՀԿ-ն իրականացնում է տնտեսական և էկոլոգիական անվտանգությանն ուղղված տարբեր ծրագրեր, որոնց արդյունքներին ծանոթանալու նպատակով ղեկավար դեսպան Ա. Սորոկինը եղան նաև Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսերում: Այստեղ տեղադրվել է արևային տաք ջրամատակարարման համակարգ, որի կիրառումը հնարավորություն տվեց նվազեցնել գազի օգտագործումը և կրճատել CO2 -ի արտանետումները մթնոլորտ (տարեկան 40 տոննայից ավելի):